

ԿԷ. — Տէռն (էջ 278).

Նախ զայս ևս «անծանօթ և անսոյզ բառ» կը կոչէ. յետոյ՝ «Թուի... նշանակէ պիղծ, անմաքուր», և հուսկ՝ շատ տաւ տամսելով՝ կրնայ ըլլալ, կ'ըսէ, «Տեսանք»: Ասոր վրայ գրելն անգամ աւելորդ էր: Աղագրեալ Տեսանք բառն է, որուն պատիւը մոռցուած է, և ուրիշ ոչինչ:

ԿԸ. — Յմախիւղ (էջ 279).

Կ'ուզէր առ ալ Հայկազեանի մէջ մտած ըլլար. բայց արարերէն բառ է այս, Հայկազեանը հայերենի համար շինուած է:

ԿԹ. Քաղոց (էջ 281).

Քառիս նկատմամբ երկար տեսութիւններ կ'ընէ որ կրնան ճիշտ ըլլալ, սակայն մեր Քաղոց (Գեկտեմբեր) ամսոյն ծագումը, ինչպէս զիտուած է արդէն ուրիշներէ, հետեւեալն է, որովհետեւ արեւն այս ամսուան մէջ ի քաղն կը մտնէ:

Հ. — Օրսց (էջ 283).

«Թեքիս որայ բառն է, կ'ըսէ, հոմանիշ պտուղ բարին»: Այո՛, որայ բառն է, բայց ո՛չ հոմանիշ պտուղին, այլ փոխաբերաբար՝ նմանութեամբ գործածուած, նշանակելու համար արդիւնքը, պտուղը: Յովնանի վրայ է խօսքը, որուն քարոզութիւնը իբր սերմ կը նկատուի, և նինուէացոց դարձը, ապաշխարութիւնը իբրև հունձը, օրայ, և արդիւնք այն սերման:

Այս համաստ դիտողարիւնները վերջացնելու, կ'ուզեմ ըսել որ նպատակս եղած է միայն ցոյց տալ թէ «Հայերէն նոր բառեր»ու երկու հատորկններուն մէջ նոր կոչուելու հազիւ 70-80 բառեր կան. մնացածները կամ սովորական բարդութիւններ են, կամ օտարալեզու են՝ հայերէնի հետ բարդուած, կամ անհմուտ գրողի ու օրինակողի տգիտութեան արդիւնք, և հուսկ՝ կամ սխալ մեկնուած ու լուսաբանուած են: Կը յուսամ թէ այսու նպատած կ'ըլլամ՝ գոնէ մասամբ, մեր մատենագրութեամբ զբաղողներու ձեռնարկին լեզուական հարցին մէջ:

Հ. ԳՐԻԳՐ ՍԱՐԳՍԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ՊԱՏՄԱԿԱՆ ՇԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՔ

Ա. — Հայկական ճարտարապետութեան ուսումնասիրութիւնը, կարելի է սսել, որ դարձել է օրուան հարցերից մէկը. որով ամէն ոք եթէ ցանկայ անոր բարեյայտող լուծումին, պարտի իւր հետազօտութիւնները, իւր գրչի լուծան արկանել նժարի այն թտաթը, յորում ձեռնհասօրէն կը մրցին ի նպատակ հայութեան դատին, հանճարեղ ճարտարապետ և մասնագէտներ, ինչպիսիք են Յ. Սարգիսովսկին և Թ. Թորամանեան: Հարկ չկայ անպատճառ մասնագէտ լինել ճարտարապետական արուեստին քննական ասպարէզի վրայ, այլ հարկաւոր է ունենալ գեղարուեստին ըմբռումն, գիտող աչք, և համեմատական սրամտութիւն: Աստի երբ

կը համարձակինք Հասարակութեան դատաստանին յանձնել մեր փասագիմաց Հետազօտութիւնները, անձնական տեսութիւնները, յաւակնութիւն չունինք հեղինակաւոր վճիռ մը արձակելու, այլ լոկ համեստ սիրողի անզրպագարձութիւնք են, որ հայրենասիրական զգայուններէ յորդորուած, յոյս կը տածենք հրապարակի վրայ գնելով, ձեռնհասից և կարողազունից տալ պատճառ անգրագոյնս մտածելու և հասնելու աղբիւրներու խորը, յորմէ նախնական գարերէն կը բխի ինքնուրոյն և բնիկ հողի վրայ Հայկական կոչուած ճարտարապետութիւնը:

Եթէ Հին ուղիով գնացողներէն խտտրինք երբեմն մեր հետազօտութեանց ժամանակ,

գուցէ նկատողներ լինին որ մենք երևակա-
յութեան աւելի ոյժ տուած ենք, քան այս-
պէս ասած դրական փաստերուն: Ընթեր-
ցողն սպաւոյժով լինի որ նպաստեալ աչքէ չի
վրիպիր, ուստի՝ եթէ լաւ մասածուի հէնց
գա է այն միակ ճանապարհը, որ պիտի
օգնէ, որպէս կարծեմ, գործնական արդիւն-
քի մը յանգելու: Այսպէս ժիւլ Վէրն, երբ
գրում էր իւր կշռագատ երևակայական վե-
պերն, նա ուշ գրած չէր միայն զբաղեցնել
և գուարճացնել իւր ընթերցողներու միտքը,
այլ կը կամենար զարթեցնել, հետաքրքրել
սրամտները, ձեռք զարնելու, փորձելու իւր
գրածները վերածելու, գործնական կեանքին
յարմարեցնելու: Նա հաւատացած էր որ իւր
մտացածին ընդոժեայ և օգուչու նաւերն
իրականութիւն պիտի ստանային, և սար-
սափ ազգէին ատլանդեական շանձկներուն
և կոպկոտոց հաստամազիլ արծիւներուն:
Արդ երբ մի քանի օրեր յառաջ գեր ի վե-
րոյ ծովերու լուղակներուն և թեւատարած
սաւառնող լերանց արքաներուն, խիզախն
լինդրերկ, իւր հաստարուն և վարագաթն
«Անկ Լուի» սաւառնակով առկախեալ երկնի
և երկրի միջև, խոյսցաւ մի թռիչքով և կա-
պեց զԱմերիկա Եւրոպայից հետ, յայնժամ
ժիւլ Վէրնի վառ երևակայութեան յաղթա-
նակն կանգնեցաւ: Ետո մը երևակայու-
թիւններ՝ երանելեաց աշխարհ կը վտա-
րուին, հասկացող և գործադրող շգտնուե-
լուն համար:

Բ. — Քրիստոնէական ճարտարապետու-
թեան վրայ խօսած ժամանակ, պէտք է
մտածել որ նորա ճարտարապետն եղած է
կոծեքի հիմնադիրն Քրիստոս, որ «ամենե-
ցուն ճարտարապետն է» և ինքն ուսուցիչ
է Սողոմոնին կանգնել Միակ Աստուածու-
թեան սառչին տաճարը: Քրիստոս վճռա-
կանօրէն ասաց, օր պիտի գայ որ ոչ Երու-
սաղէմ և ոչ Սամարիա իւր հետեւողներուն
աղօթատեղի պիտի լինին: Սողոմոնի շինած
տաճարը հեթանոս գաղափարի ծնունդ էր,
հոգեկան բաւականութիւն չէր կարող տալ
ճշմարիտ Հաստատեցողին: Զօրաբար լի տա-
ճարը չունէր առաջնոյն նոխութիւնն և գեղեց-
կութիւնը, թերեւ Քարեղծի աղգեցութեան
տակ շինուած, քառակուսի անտաք քարե-
րով և տափարակ փայտեակ ծածքով: ան-
հրապոյր է Յիսուսի ճաշակին, և չի յիշուի
որ մի օր աղօթած լինի հոն, թէ և Սողո-
մոնի կոյուած սրահին մէջ բազմիցս քարո-
ղած և թափած է հրէից հողիքն: Յիսուս կը

սիրէր բացօթեայ անապատներու մէջ, բուր-
ներու վրայ աղօթել: Երկինք գմբեթաորեալ
կը հանգչի երկրի վրայ: Վերև աթոռն է,
ներքև պատուանդան, հոն աւելի մօտ կը
զգայ Սառածոյ՝ որ իւր Հայրն է, և ան-
կից կ'իջնէ արև ու անձրև շնորհաց՝ ար-
քայութեան որդիներու վրայ: Յիսուս
հոգևով և ճշմարտութեամբ երկրագունդը
կը փնտռէ և կ'ուզէ որ իրեն նուիրուած
աղօթատեղին նմանութիւն լինի բնութեան,
բաձրաձեղուն գմբեթարդ, ուսկից արևի ճա-
ռագայթներն մտնեն և լուսաւորեն ներ-
սը, և շատ է իր այսպէսներու, ինչպէս
Հրէից, «այլ ոչ եթէ բարձրեալն ի ձեռա-
գործ տաճարս բնակէ»: այլ անոր հակա-
ռակն. «Երեսնա գտուն իմ տուն վայելուչ,
բնակել ի նմա նորոգութեամբ»: Հոգևով և
ճշմարտութեամբ: Մանաւանդ Քրիստոսի
Համբարձմանէն յետոյ ստիպողական և
պարտաւորեցուցիչ եղաւ քրիստոնէից պնդու-
յերկիւն, և կապոյտ կամարին մէջ հետա-
զօտել անոր գնալու հետքը յերկինս ի վեր:
Աւաքեալք և հաւատացեալք շմոռացան եր-
կու հրեշտակների պատգամն. «Այս Յիսուս
որ վերացան է ձէն՝ յերկինս, սոյնպէս
եկեացէ, զոր օրինակ տեսէք զնա երթալ
յերկինս»:

Աշտարանը իւր արևածագէն հսկայական
նուաճումներ ձեռք բերաւ Քրիստոսի երկ-
նաւոր թագաւորութեան համար: Բեթղհէ-
մի այրէն մտաւ ձեմելու կայսերական
սրահներու մէջ, իսպառ Փողոզթայէն անցաւ
կապիտոլինոնի գագաթի վրայ: Արևելք ող-
ջոյն աւետարանական բանն ընկալաւ ինչդու-
թեամբ, և արդիւնքով լցուց գերկիր. իսկ
Արևմուտք, յաւիտենական քաղաքն, երեք
հարիւր տարի ատեց զքրիստոնէութիւնն, և
շմտաւ Յիսուսի քաղցր լուծի տակ:

Գ. — Հռոմ, ըստ Վիդրիկեան առածին,
ըմբոստները նուաճելէն վերջ, յաղթուած-
ներուն ինայեթով, ներողամիտ կը գտնուէր
մանաւանդ անոնց որոնական պատամուն-
քին հանդէպ, որովհետև այն սպանալիք
մը չէր Հանրապետութեան հաստատութեան
և ապահովութեան համար: Ուստի երբ ա-
ռալին դարուն իսկ Արևելքի մէջ շտապ
հանցեց քրիստոնէութիւնն և երևան եկաւ
կազմակերպուած հասարակութիւն մը, Հռո-
մի իշխանաւորներն անտարբեր աչքով կը
նայէին նոր երևոյթին վրայ: Թէպէտ պաշ-
տօնական ոչ մի ձև չունէր, այլ թոյլա-
տրուած էր իբրև աղանջ մը որ տակաւին

1. Գ. ԹԱԳ. Է. 53.

2. Գործք. ԳԷ. Ա. 10.

Ֆրասակար չէր և ոչ արգելք պետական տիրոջ կրօնքին և կայսրաց պաշտամունքին։ Մեզի համար մեծ բարեսուրուծիւն է այսօր կարգաւ և ուսումնասիրել, Պօղոս Առաքելոյ դէմ՝ Հրէից յարուցած հայածանքներու պատմութիւնը, յորում ոչ միայն կը Հատարուին քրիստոնէական Հասարակութեան ոյժն և նշանակութիւնն, այլև կը կը Հետաքրքրեն զմեզ իրենց ժողովարանները, ուր կը Հաւաքուէին իրենց կրօնական պաշտամունքը կատարելու, և Հարկ է փոքր ի շատէ հշդել, որպէս զի եկեղեցական ճարտարապետութեան ծնունդն և ծագումն ըստուգուի։

Հռոմէական օրէնքի Հոգեբանութիւնը Հասկանալու համար, լինի գաւառների մէջ կամ քաղաքներում, դիտելու է պայտօնէից կամ գաւառւորներու վարմունքն, երբ Առաքելոյ դէմ եղած ամբասանութիւնը կը Հասնին անոնց ատենան։ Հրէայք չկարենալով դժմարբել նոր յեղափոխականի անդիմադրելի օրձանքին, նոքա զառ իշխանութեան և պետութեան կը մատնեն իբրև խտրարար և հակառակ իշխանութեան կայն։ «Իւ իբրև մերձ էր Պաւղոս բանալ զգերան իւր, ասէ Պաղղիոյն ց'Հրէայսն. Ի՞՞՞՞՞ էր ինչ անիրաւոյնքն կամ խարդախոյն յարեաց, ո՞վ Հրէայք ի դէպ էր ինձ անաւ ձեզ։ Ապա եթէ խնդրեք ինչ են վասն բանի և անուսնց օրինաց ձերոց՝ տեսէք ձեզէն, քանզի դատարար այդպիսի իրաց չկամիմ լինել։» Պօղոս Առաքելու իբրև Հռոմայ քաղաքացի բողոքելով առ կայսրն, կարողացաւ չափաւոր ազատութեամբ երկու տարի ապրի և քարոզել զՔրիստոս Հռոմի մէջ, մինչև ներկայացաւ Երեմի ատենան, և արդարացաւ որովհետև ոչ շարութիւն, ոչ անիրաւութիւն գործած էր, այլ Քրիստոսի յարութիւնը քարոզած էր, վասն որոյ և Երեմն չկամեցաւ «գատաւոր այնպիսի իրաց լինել» և անպարտ արձակուեցաւ։ Աստի կարելի է նկատանալ յետին ժամանակի Հայածանքների Հոգեբանութիւնը, որ քրիստոնէից թշնամիք անձնական վրէժխնդրութիւն լուծելու համար, կամ ընչից յափշտակութեան համար, իբրև շարագործ և դաւաճան պետութեան կ'ամբաստանէին զիրենք, և ոչ թէ կրօնք իկամ Հաւատքի խնդրոց համար՝Աստի առաջին դարուն իսկ, ի ներկայութեան առաջելոց գաւառներու մէջ քրիստոնեայք

հանգիստ կերպով կարողացան կազմակերպուել և զարգանալ, ունեցան իրենց աղօթատեղիներն կամ ի մի վայր ժողովելու սրահներ։ Պօղոս և Բաւնարա տարի մը քարոզութենէն վերջ Անտիօքայ մէջ կազմեցին Հեթանոսաց առաջին՝ մայրն ամենայն Եկեղեցիներուն և հոն քաղաքական հանգամանքով աշակերտներուն տուին պաշտօնական և դաւանաբանական Քրիստոնեան անունը՝ 1)

Դ. — Անտիօքայ մէջ ուրեմն առաջին անգամ՝ նազովրեցոյ Հետևողներ կոչուեցան քրիստոնեայք, որոնք ամէն որ մի տեղ կը Հաւաքուէին, ժողովոյրք բազում, յսել բանին քարոզութիւնը։ Սա մի առանձնականի տունէ աւելի եղած է, մի Հասարակաց շինութիւն. և այնպիսի շինութիւն՝ որ ամենայն կերպով կը համապատասխանէր կրօնական պաշտամանց և Հաւատացելոց դասակարգին. ուրեմն դա համարելու ենք առաջին եկեղեցին, և յոյժ ցանկալի եթէ կարելի լինէր քիսնալ անոր ճարտարապետութիւնը։ Ոչ սա է միայն, այլ և Գործք Առաքելոցի մէջ շարունակ կը յիշուին ժողովարանի մէջ Պօղոս մի տարիով երկուսով զոր ու զիչեր քարոզեր սովորեցներ է նորադարձներուն Քրիստոսի Հաւատքը, ուր քրիստոնէութիւնն սկսած էր ապրիլ իւր ընադրոյմ կեանքով։ Այս ժողովարաններէն կամ եկեղեցիներէն մէկն յականէ յիշուած է Տրովպոզայ քաղաքի մէջ եղած Տիրանայ՝ երկայրկանի վերնատունը, ուր Պօղոս Հաւաքեր էր թէ՛ քարոզութեան և թէ՛ պատարագի խորհուրդին համար. «ժողովեալ էաք բեկանել զհացն»։ Այս տունը ունեցած է կամ յարմարուած են յարմար բաժանմունքներ, տեղաւորելու զանազան դատու պատշաճեայ Հաւատացեալները Տիրաքիկոս երիտասարդն, որ քունը տարած, երրորդ գաղտկունէն վար կ'իյնայ, անշուշտ երեսուից դասակարգին կը պատկանէր և պիտի շնօտնարար Ս. Հարողութեան Այս պատմուածքի վրայ կարելի է կազմել նախնական եկեղեցւոյ ձևը, որ'ինչ ալլինի, միշտ Հեթանոսական տիպար մը կը կրէ։ Մեզ կը թուի թէ Տիրանայ սրահն եղած է Հռոմի Մեկենասի տան միջի թէ՛անրոնի նման մի շինութիւն, ուր բաց ի բնմէն և Հրաւիրելոց աստիճանաւոր նստարաններէն, ունեցած է անշուշտ մէկ կամ երկու յարկանի

1. Եւ և ի Տրոսոն Բաւնարա ինչրիւ զՍոգոս, և գաւա զնա՝ ան. յԱնտիօք. Եւ ևզ ևնցա զան ոչլոյն ժողովել յեկեղեցին և ուսուցանել ժողովոյրք բազում, և անուսնել նախ Անտիօք զաշակերտն Քրիստոնեայս։ Գործք. Գլ. ԺԱ. 25, 26.

2. Ս. Մատենոսի քարկոծումն զբեթ անմիջապէս յետոյ։
3. Տիրան անուն է հայկական. մի այլ Համանուն՝ մեծ զբազէս եղած է Լուկուլուսի և Կիկերոնի բարեկամ։

վերնատուններ, ուր երկուս երիտասարդու-
թիւնը կը հաւաքուէր:

Դոյնպէս Ս. Պետրոս Կոնստիտի տան
մէջ ափ յափոյ կ'արմարցնէ Մկրտութեան
և Գոռնութեան աղօթքի վայրը: Ինչպիսիք
էր այդ միջավայրը, արտաքին պատմու-
թիւնը կը հնչառացնէ անոր գաղափարը.
Հարուստ եղբայրներու տներէն մէկն կը
գրուէր հաւատացելոց տրամադրութեան
տակ. այդ տներն ունէին մեծ դահլիճներ
(aula) այգբորելի կողմակի սրահակներով,
և հնչառ էր աստամանակեայ ճաղերով կամ
կապերտներով բաժանել և մեծ յարմարու-
թիւն կ'ընծայէին քահանայից՝ կատարելու
անխափան սուրբ արարողութիւնները:

Ե. — Մակայն իրաց այս վիճակը Եր-
կորդ դարու կէսերէն մինչև Երրորդի վեր-
ջերը գրեթէ կերպարանափոխ կը լինի: Վասն
զի գեա Օգոստոս կայսեր ժամանակէն, Հռո-
մէական ներգողմտութիւնն, և քիչ մ'աւելի
քաղաքականութիւնն՝ շահելու Արևելեան
քաւառները, թոյլ տուած էին որ փոռլգա-
կան, ասորական և եգիպտական աստուածու-
թիւններ ունենան սեփական տաճարներ՝
պարսպէն ներս յինուած, և Հռոմի քաղաքա-
ցիներէն շատ հետևողներ ունէին. ասուած և
արհամարուած Հրէաներն անգամ ունէին
իրենց ժողովարանը յայնկոյա Տիբերիոսի Յա-
նիկուլոն լեռան ստորոտը, (այն տեղերն ուր
այսօր կը գտնուին Ս. Կալիստոսի և Կեկիլի-
այի և այլ եկեղեցիներն) և զորս Որատիոս
ծաղրելով «Կրճաթը, curia»՝ կը կոչէր: Թըլ-
փատուածները: Հրէից գաղութն ստուարա-
ցաւ Տիտոսի բերած գերիններով, որոց մէջ
կային Երուսաղէմի քրիստոնեայ Հրէաներն,
որոնք իրենց Հեռ բերին բոլոր Առբքաղաքի
և սնօրինական տեղերու և մարդկանց յի-
շատակները: Բայ ի Տրայանոսի անցողա-
կան հայածանքէն, Ալգրիանոսի և Անտոնիոս
Պիոսի և այլոց ժամանակ երկար տարիներ
խաղաղութիւն և ազատութիւն վայելեցին
քրիստոնեայք և լցին արևելեան քաւառներն:
Ատորիքէն եղած կայսերք դիւրացուցին Ի-
սուլիոյ քրիստոնէից կեանքը, բայց զբրախ-
տարար զգալի հետք մը թողած չեն. Հռոմի
միջի քրիստոնէից համար կ'ըսուի թէ գետ-
նազամբաններու մէջ կ'ապրէին: Հռոմ քա-
ղաքի համար օրէնքը իւր գաղութներն և
զարտուղութիւններն ունէր: Երբակոյտն
աստիկ վրէժխնդիր Հռոմի պայտօնական
կրօնքին, որ Հիմն կը կազմէ իրենց կառա-

վարութեան, անշորդապարտօրիւն կամ ան-
կրօնութիւն համարելով ըտոր միւս ազգե-
րու կրօնքն և կրօնական ծիսակատարու-
թիւնք, ինչպէս ասացինք, խստիւ արգելած
էր որ և ձեռ կամ դիմալի տակ, օտար
աստուածութիւն կամ պաշտամունք մուծա-
նել Պոմպիոյ այսինքն սրբազան պարսպէն
ներս: Ուստի կըզօրոսի ժամանակ հրէու-
թիւնն՝ որ մինչև արքունիքի մէջ սարդեր
մտեր էր, ծերակոյտի բողոքի վրայ, խառն
քրիստոնէից Հետ, ոչ միայն Հռոմէն և ա-
րուարձաններէն, այլ և բոլոր Իտա-
լիայէն աքսորուեցան: Յորչափ հեթանոս
Հռոմն, կապիտոլիոնի բարձունքէն պատ-
գամներ կ'արձակէր աշխարհի, քաղաքի
քրիստոնեանք թիկը կամ եկուրք, չկա-
րողացան պաշտօնական ինքնութիւն մը կազ-
մել և ունենալ իրենց առանկի եկեղեցին ոչ
քաղաքի մէջ և ոչ պարսպէն դուրս, ուր վեր-
ջերս՝ 1916ին, յանկարծ գետնի տակ եօթը
մետր՝ խորութեամբ՝ գետնափոր տաճար մը
ի յայտ եկաւ, զոր Տուար խորհրդոց (Tem-
pio dei misteri) կոչեցին: Դա պատկանում
է արգելուած կրօնքների մէկին, որոնք գաղ-
տնածածուկ եկամուտներ, այսինքն հետևող-
ներ ունէին հռոմայեցիներէն: Այդ տաճարի
մուտքը գոգ մի հազարամետր հեռուէն կը
սկսէր գետնափոր ուղիով, որ անհետ էր զըր-
սեցիներու համար՝ ծածկուած ծառերի պու-
րակի մէջ: Բայց Բ. և աւելի Գ. դարու քրիս-
տոնեայք չեն յալողած յար և նման մի տա-
ճար կազմելու իրենց պաշտամանց համար,
և ստիպուած եղած են ապաւինիլ նեղ նեղ,
ցած և խոնա փապուղիներու մէջ, որ այսօր
գետնազամբաններ կը կոչուին, և ըստ Հ.
Տակկի Վէնզուրիի Յ. Ընկ. «Կը կազմեն
քրիստոնեայ և կաթոլիկ Հռոմի փառքը»
Դա մի օր Ս. Մարիամ դէի Մոնտի եկե-
ղեցւոյ մէջ քարոզում էր. «Հնոս առաջին
դարուն բոյն դրաւ քրիստոնէութիւնն, Հոն
Պետրոս Առաքեալ քարոզեց... Երեք դար
Հռոմի Ս. Եկեղեցին ապրեցաւ ստորեր-
կերայ դամբաններու մէջ, ուսկից եւա յաղ-
թական՝ երբ Մեծն Կոստանդինոս Միանոս
կոնդակով շորհեց աշխարհի կրօնքի ազա-
տութիւն: Որով Արևմուտք շորորդ դարէն
առաջ փնտռել քրիստոնէական ճարտարա-
պետութեան յուշարձաններ աւելորդ աշխա-
տութիւն է. և ստիպուած ենք դարձնալ
Արևելքի մէջ փնտռել, ուր ինչպէս տեսանք,
նոյն իսկ ի կենդանութեան Առաքելոց կազ-

1. Դիտոսի տանց Հեռ ծանօթացաւ Պոլոսն, սառչին
կապուցի ժամանակ:
2. Զհարուած այլևս եօթը մետր լիցը հողը: ԳՐ

խաւ. Տերութիւնը աներ է երկաթուղիի շինութեան
համար:

մուտ չէին ժողովարաններ վերնատներու մէջ և աստեղն եկեղեցիներ, որոնք անհատներու տներու մէջ յարմարցուած տաճարներ (aula) էին: Քրիստոնեայք Ա. և Բ դարուն, խիստ զգուշաւոր և զազոնապաշտութեամբ կը պաշտէին իրենց կրօնքը, բայց երբ Հեթանոսաց կապակածներն աւելցան և իբրև անիրաւ և խարքախ մի հասարակութիւն ամբաստանուեցան, այն ատեն երևան եկան հռչակաւոր Ջատագովները. ասոնցմէ առաջին Ս. Յուսիմոսի, Անտոնիոս Պիոսի և Մարկոս Աւրելիոսի տուած պաշտպանութեան մէջ, կէս պաշտօնական ձև կ'առնու թրիստոնեական հասարակութիւնն, և յայտնի կը լինին անոնց ժողովարաններն կամ եկեղեցիները: Իսկ Գ. դարու երկրորդ կիսուն թրիստոնեայք տիրապետող դիրք մը կը ստանան և բարձրագոյն պաշտօնէութեան գլուխ կ'անցնին, այնուհետև առանձնական տներ

րուց ելլելով Եկեղեցին արևի տակ կը փայլի պայծառ շինութիւններով: Ի նկատի առնելով որ ինչպէս Հեթանոսաց կրօնքն ատելի և խորշիկ էր քրիստոնէից, այսպէս նաև անոնց կողմ տարաներն, մեհեաններն, բազմաբնակարան շէնքերն՝ որոց տակ կային ընդարձակ գետնադամբաններ¹: Պիտէին Առաքելոյ պատուէրը. «Եւ մի լինիք լծակիցք անհաւատից... զի՛նչ նմանութիւն է տաճարի Աստուծոյ (ընդ) մեհեանաց յ'... Ուստի թրիստոնեայք տարբեր ոճի հետևած պիտի լինին շէնքն յարմարցնելու իրենց կրօնքի պաշտաման: Եւ որովհետև Հեթանոս հասարակական շինութեան մէջ միայն Բագրիկաններն էին մատչելի իրենց՝ առանց խարուսեան կամ լծակից՝ լինելու անհաւատից, նոքա այս ձևը պիտի ընտրեն, ինչպէս պիտի տեսնէք, Տի՛ՊԱՐ ԵԵԵ՛ՂԵՑԱԿԱՆ ՃԱՐՏԱՄԱՊԵՏՈՒԹԵԱՆ:

(Շարայարելի) Է. Գ. ՆԱԶԱՐԵՍԵԱՆ

ՎՈՒԼԿԱԴԱՅԻ ԾՆՆԴՈՑ ԳԻՐՔԸ

Ս. ԳՐՈՑ ՏԱՆՁՆԱԽՈՒՄԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՍԵՄԱՏ

Vulgataի վրայ դեռ նոր կատարուած պատկանելի և համբերատար երկասիրութիւնը ընթերցողին պարզելէն առաջ, լաւ պիտի ըլլայ պատմական փորձիկ ակնարկ մը տալ Vulgataի թարգմանութեան շուրջ, պայծառ կերպով տեսնելու նպատակը՝ որուն կը դիմէ Ս. Գրոց Յանձնախումբը:

Տասնհինգ դար առաջ Ս. Հերոնիմոս, Բեթղեմէի անապատի առիւծը, քաջուած Պաղեստինի գեղաստիլ և ընդարձակ դաշտերու մէջ, հեռու քաղաքներու ժխորէն ու կեանքի զբաղանքներէն՝ միայնութեան խաղաղ ու լռին ծոցին մէջ կը թաղուէր աստուածագիծ տառերու պատգամներուն մէջ, բայց եկեղեցւոյ քաջամարտիկ ախոյեանին խիզախ հոգւոյն անբնական էր այդ խաղաղութիւնը. ինչ որ կը սիրէր այդ հսկան՝ պատերազմն էր, երբ հրճուանքով կը տեսնէր իւր կողովի զբոսի զօրութեան տակ խորտակուած

մոլորութեան մը ցիրուցան բեկորները, և մարդկային բնութեան անպարտելի կարծուած արգելքները կը տարածուէին իւր ոտքերուն առջև. և եթէ այդ երկուքն ևս խոստովանէին իրենց պարտութիւնը և համարձակէին ելլելու ընդառաջ՝ նա նման հին հերոսներու՝ ինքնին կը ստեղծէր դժուարութիւններ, ինքն իսկ կը զբաւէր և կը յարուցանէր նոր թշնամիներ՝ ուզով նոր դաշտ մը յարդարելով:

Տեսնելով նա այն տարբերութիւնները որ լատին զանազան եկեղեցեաց գործածած Ս. Գրոց մէջ կային և հերքելու համար հրէից այն խճբիծ առարկութիւնը թէ քրիստոնեայք մէջբերութիւններ կ'ընեն Ս. Գրքէն առանց հասկնալու անոնց բուն իմաստը որ

1. Այսպէս են Ալեան ճանապարհի հռչակաւոր ու ծառայող շիրիմները, կատարուած չորս մեծամեծներու կողմէ: 2. Բ. Կոր. Գ. 14: